Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 256 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԻԶՄԻՐԼՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՍԱՐԿԻՍ ԵՎ ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Ուսումնառության, հետազոտությունների և համագործակցային ծրագրերի իրականացման համար նպաստավոր միջավայրի ստեղծում՝ Երևանի պետական համալսարանի Սարկիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանի ենթակառուցվածքների վերակառուցմամբ՝ դարձնելով այն ժամանակակից և ուսանողակենտրոն կրթօջախ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Իզմիրլյան բարեգործական հիմնադրամ (Մելիք-Ադամյան 2/1, կենտրոն 0010 Երևան, Հայաստան, ՀՎՀՀ՝ 02819088)
4.	Ծրագիրը կատարողը	Իզմիրլյան բարեգործական հիմնադրամ (Մելիք-Ադամյան 2/1, կենտրոն 0010 Երևան, Հայաստան, ՀՎՀՀ՝ 02819088)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, 0025, Ալեք Մանուկյան փողոց, 1 շենք, բնագավառը՝ կրթական
6.	Ծրագրի բյուջեն	195,000,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ (Հայաստանի

		Հանրապետություն, քաղ. Երևան, 0025, Ալեք Մանուկյան փողոց, 1 շենք)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի մայիսի 2-ից մինչև 2026 թվականի փետրվարի 28-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Երևանի պետական համալսարանի Սարկիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանի գլխավոր ճեմասրահի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 195,000,000 դրամ: Աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2025 թվականի մայիսի 2-ից մինչև 2026 թվականի փետրվարի 28-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Շինարարական աշխատանքների իրականացում՝ 195,000,000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցություն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ համագործակցություն չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով տեղեկությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

22.04.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ